

նամի են, ու ամենեին մէկմէկու հետ
խնամութիւն չեն ըներ :

Դարայիմները մէկալ Հրեաներէն
շատ աւելի մաքրասէր ու միաբանա-
սէր են . բնութեամբ աւելի քաղցր
ու անկեղծ կ'երենան, կերպարանք-
նին ալ աւելի տեսքով ու պարկեշտ է :
Ո աճառականութեան մէջ մէկալնե-
րուն հաւասար՝ ազքաբաց են, բայց
անոնց կծութիւնն ու խորամանկու-
թիւնը չունին : Ե եզունին տաճկերէն
ու թաթարերէն է . գրուածքի մէջ
ալ նոյն լեզուները կը բանեցընեն ե-
րբայական գրով : Դարայիմներուն ա-
ւելի շատ գտնուած տեղերն են Ե-
գիպտոս և Ե Եհաստանի Ո ոլինիա ու
Ի իթուանիա գաւառները . բայց ա-
ւելի շատւոր ու անուանի են Ո ու-
սաստանինները որ երկու հազարի չափ
կը համբուին . ասոնց մեծ մասը Խրի-
մի Եկոզէվէ ու Քէֆէ քաղաքները
կը բնակին, մէկ մասն ալ () տեսսա :

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Դշտակի աղքասիրութեան իորչ և յորդոր :

Եթաքունութիւնը այնչափ սիրելի
ու պատուական բան է որ խիստ մեծ
անզգամներն ալ կը ջանան առաքինի
ըսուիլ . միթէ անովառաքինի կ'ըլլան.
չէ . վասն զի “Ե հուր փորձի ոսկին, և
մարդ ’ի բովս տառապանաց ”, կ'ըսէ
իմաստունը : Ո ըչափ մարդիկ կան որ
ազգասէր կ'ուզեն ըսուիլ բայց անով
միայն ազգասէր չեն կրնար համա-
րուիլ . վասն զի ազգասիրութիւն ալ
իրեն բովքը՝ իրեն նշանը ունի : Ո ըն
է աս նշանը : Ե զգին համար աշխա-
տիլ, բրտնիլ, տառապիլ, չարչարուիլ.
ան բաւական չէ . ազգէն ամենեին
փոխարէն մը կամ գովեստ մը չլսուլ :
Են ալ բաւական չէ . իբր թէ ազգին
վնաս ընելու համար աշխատած ըլ-
լայիր՝ արհամարհուիլ ազգէն, նախա-
տուիլ, հալածուիլ, երեսի վրայ մնալ :

Ո Վ չգիտեր թէ մեծ կրակ է ասիկայ .
անոր համար ալ քանիներ կան որ ա-
սոր քովերը մօտենալնուն պէս՝ խծու-
ծի պէս այրեր փշացեր են : Ո իայն ան
մեծամեծ մարդիկը կը դիմանան աս
կրակին, որ ասկէ աւելի սաստիկ կրա-
կով վառուած են, այսինքն վեհանձն
ազգասիրութեամբ, զուտ ազգասի-
րութեամբ, և ոչ շահասիրութեամբ
կամ թեթեամիտ փառասիրութք :

Յաւալի և միանգամայն գեղեցիկ
օրինակ ունինք աս բանիս մեր երա-
նաշնորհ Ծարդմանիները . ցաւալի՝
ազգին վրայ նայելով, և գեղեցիկ՝ ան
մեծամեծ անձանց ազգասիրութիւնն
ու վեհանձնութիւր մտածելով : Մե-
լու բան է սրբոյն Ո ովսեսի Խորե-
նացւոյ այրած սրտով գրած սրտա-
շարժ գանգատը, որ մեծին Տրդատայ
ողբերգական մահը ակամայ կամօք
պատմելէն ետև՝ կը ստիպուի աս վը-
սեմ ու ծանր խօսքերը զուրցել .

“Եւ զի այսոքիկ Ճշմարիտ այսպէս, միկթարես-
” ցուք մերովք վասնգիւքս և մեք . զի եթէ ընդ
” փայտ գալար զայս արարին, ասէ Քրիստոս,
” իսկ ընդ չորն զինչ լինիցի : Արդ եթէ ընդ նբա
” Աստուծոյ, և որք ’ի թագաւորութենէ յաղագա
” Աստուծոյ զինքեանս նուաստացուցին՝ այս է,
” այլ զինչ մեր բանս առ Աստուծոյ յաղագս ’ի
” չէնջ վասնգիցս, որոց վասնգք և աղքատութէ
” սեպհական է : Այլ սակայն ասացից . Ո՞ ո՞ ՚ի
” ձէնջ թոշակս յաղագս մեր . ո՞վ ո՞ք վարդապէ-
” տայն մազթանս . ո՞վ ո՞ք բան յօժարեցուցանող
” կամ յորդորական . ո՞վ ո՞ք յերթալս մեր բեռնա-
” բարձս, ո՞վ ո՞ք ՚ի գալն մերում հանգիստ, ո՞վ ո՞ք
” տուն կամ օթանոց մեղ պատրաստեաց : Թովզ
” զայն . զի և ոչ զինքուս չարս և զագիտութիւնս
” հանգերձ մնուի փառամոլութեամբն և կատաղի
” լեզուանութեամբն՝ սանձահարեցէք, այլ նիւթ
” նոցա անմատութեան զձեր ուսումնատեացդ տա-
” լով բարս, բորբոքեցէք առաւել քան զնոցն
” բարելոնի ” . Պատմ . Բ :

Ե յսպիսի վեհանձն ու վշտահար
ազգասիրաց յօրդոր և միկթարութի
ըլլայ հետագայ յօդուածը որ Ծա-
մաս անունով հոչակաւոր գաղղիա-
ցւոյն գրածն է Լարդեսիոսի ներբո-
ղին մէջ, և աս վսեմ հատուածը բո-
լոր նոյն մատենագրին գրուածքնե-
րուն մէջ ամենէն գեղեցիկն է :

1 Անտոն Շամաս Ճարտասան մատենագիրը մ-
ռած է 1785ին :

“Արք մեծահանձարք, յոր ծագս աշխարհի և
”իցէք, այս է ձեր ճակատագիր . վիշտք և զը-
”զուանք և հալածանք, արհամարհութիւն իշխա-
”նաց, հովութիւն սոսկականաց, չարախօսու-
”թիւնք նախանձորդաց կամ որոց նախանձորդա-
”ձեղ զանձննս համարիցին, աղքատութիւն և
”վտարանդութիւնք, թերես և մահ անգամ ան-
”ծանօթ ՚ի հեռաւոր օտարութեան ՚ի ձերոց
”հայրենեաց . այսոքիկ են ահա բաժինք վիճակի
”ձերոյ: Եւ զի՞նչ աստի . գուցէ արդեօք ձեռն-
”թափ ՚ի հրահանգելոյ զմարդիկ լինիցիք: Ոչ.
”մի այդպէս: Սակայն թէ և կամիցիք ինչ, միթէ
”ձեռնհամ իցէք ՚ի նոյն . միթէ կարո՞ղ ինչ իցէք
”սանդզնել ձերումդ հանձարոյ, կամ զդէմ ունել
”զահագին թափոյ ուժգնութիւնն որով վարէ նա
”զձեզ: Ոչ ապաքէն առ ՚ի խոկալ եկեալ է ձեր
”յաշխարհս, դր և արեգակն ՚ի լուսաւորել զաշ
”խարհ . ոչ ապաքէն և ձերդ շարժումն էկամուտ է
”՚ի ձեղիբու զնորայն: Հապա անսամլիք ձերոցդ ո.
”ընաց, և մի բնաւ եղուկ զանձննս կարդացէք:
”Զի՞նչ ինչ ազգիցեն թշնամիք ձեր ընդդէմ ձը-
”մարտութեան . յաւերժական է նա, և այլն ա-
”մենայն անցեալ գնայ: Ճշնարտութիւնն է վարձ
”վաստակոց ձերոց . նոյն ձարակ հանձարոյ, և
”նոյն զրավիդն յաշխատութիւնն ձեր: Բազումք
”իցեն որ յանմութէ կամ ՚ի ցրտութենէ և կամ
”՚ի խուժագուժ բարոյից բերեալք պկէն զձեզ և
”հալածեն . այլ և շատք ևս համախորհուրդք ընդ
”ձեղ գոտանին ծագաց ՚ի ծագս աշխարհի: Յիշեցէք
”առաքինիք, զի և նոքա չարչարակից են ձեզ և
”խորհրդակից . յիշեցէք զի Սոկրատ և Պղատոն
”և նոցին նմանիքն՝ թէակտ վաղամեռիկը՝ այլ
”բարեկամք ձեր են, և ՚ի դարս որ զնի՞ կացեն
”անշուշտ այլք յոլովք որ խելամուտ բանից ձե-
”րոց եղիցին, և ձեղ հանգոյն զամենայնէ խորհես-
”ցին: Մի ազդ և մի տոհմ էք դուք և համօրէն
”արք աւագք որ եղնն և որ գալոց են: Ոչ զի
”յայս ինչ վայրի կամ յայն ինչ ժամանակի զէտղ
”առեալ գադարիցէք՝ լեալ էք դուք . հապա կեց-
”ջեք սակս ամենայն աշխարհաց և ամենայն ժամա-
”նակաց . ծաւալեամլիք զիեանս ձեր ՚ի վերայ կենաց
”ազգի մարդկան . նա և անդր ՚ի վեր ևս ամբարձ-
”ջեք զիտուս ձեր . տեսէք զի ըստ պատկերի Ար-
”տուծոյ կերպարանեալ է հոգիդ ձեր . քաջացա-
”րուք ապա առաջի նորին որպէս վայել է Ճմար-
”տութեանն սիրողաց: Բարէ . ՚ի ձեղ ակնարկէ
”Արտուած, ձեղ անսայ, ընդ ձեղ հաշի, և գուք
”եղո՞ւկ անձանց կարդայցէք: Հանդերձ սովիմք
”եթէ գարձեալ և զարդկան ինչ ինդրիցէք ըզ-
”վկայութիւն, ահաւասիկ ես ձեղ այնմերաշխա-
”ւոր. վկայութիւն ասեմ ոչ անզօր ինչ և անյայտ
”որպէս այն որ ՚ի վաղանցուկ յայս կեանս մեր
”ընծայի, այլ անեզը և անկորուստ ընդ ժամա-
”նակս միգս գարուց բազմաց: Տեսէք աւանիկ
”որպէս խաղացեալ գայ մատչի հանդերձեալն
”ազդ, և զայս առ մի մի ՚ի ձէնջ արձակէ բար-
”բառ . Արբեա զարտասուս քո . իրաւունս առ-
”նել քեզ եկի ես, և վախճան տառապանաց

”քոց . ինեւ արք մեծահանձարք շնչեն զկենդա-
”նութիւն . ես վրէժինդիր Կացի Կարդեսեայ
”՚ի թշնամեաց անձին նորա, ես զնշնարս նորին
”յապառած վիմաց և ՚ի ձիւնախաղաղ լերանց
”հանեալ վիխեցի ՚ի Փարիզ . ես եմ որ զբանս
”արկուսն կոփահարեմ, և զբոնակալս նկուն
”կացուցանեմ. ես եմ որ խոտան գրեմ զշիրիմն
”կանգնեալս ՚ի մէջ տաճարաց ՚ի շուք իշխանաց
”աշխարհի, և մեծարեալ պատուեմ զանտաշն
”վէմոր զնշնարս հանձարեղն ծածկիցէ: Յուշ
”լիցի քեզ, զի անմահ է հոգի քո, և անունդ ան-
”մահասցի ընդ նմին: Ժամանակն ՚ի փախուսա
”սրանայ, և վայրկեանք զվայրկեանս փոխանա-
”կեն, և սահեալ ՚ի բաց գնայ երազ կենցաղոյս:
”փոքր միւս ևս, և կեցցես գու. և ներեսցես ան-
”իրաւութեանց քոյոյ ժամանակիդ, անգիծու.
”թեան հալածցացն քոց, և բնութեանն փոխա-
”նակ զի գեեղ ընտրեաց ՚ի հրահանգել և ՚ի իրա-
”տել զմարդիկ ”:

Խաւակաւոր խօսք :

ԽՕՍՔ Հասկրցողին ալ չհասկրցո-
ղին ալ քիչ խօսք բաւական է: Խս ա-
ռակը այնչափ Ճշմարիտ է որ վրան եր-
կայն բարակ բացատրութիւն ընելը
առակին ալ գէմ կ'ըլլայ: Խսէլացի
մարդը քիչ կը խօսի, մէյմը որ կարձ
խօսքով շատ բան կը հասկրցընէ. եր-
կրորդ՝ որ գիմացինը խելացիի տեղ
կը դնէ . իսկ անխելք մարդը շատ կը
խօսի, վասն զի խօսիլ չգիտեր, ու գի-
մացինը խելացի չսեպեր, հապա զա-
մէն մարդ իրմէ կը չափիէ: Ծկար գլուխ
ունեցողը ոչ ինքը ուրիշն կրնայ հաս
կրցընել իր միտքը, և ոչ ուրիշներուն
միտքը կարձ խօսքով կը հասկրնայ .
գէշն ան է որ շատ անգամ գիմացինին
երկայն երկայն խօսքերէն ալ բան
չհասկրնար :

Արէք իւն՝ սիւնիսնեւ սառ իւնիւ .
Անմաշ ըստ, դառնւ շուրջն սառ իւնիւ :